

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱԶԷՏԻ, Ապրիլի փոքր
ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ճիշտ դիմաց
~~~~~  
Pour les annonces s'adresser  
à la Rédaction du Journal PHAROS  
LE CAIRE — RUE ABDIN  
vis-à-vis du «Mokattam»

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| ԵԳԻՊՏՈՒ ՀԱՄԱՐ       |         |     |  |
|---------------------|---------|-----|--|
| Տարեկան . . . . .   | Ղր. ողջ | 100 |  |
| Վեցամսեայ . . . . . | »       | 53  |  |
| Եռամսեայ . . . . .  | »       | 30  |  |
| ՕՏԱՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՐ  |         |     |  |
| Տարեկան . . . . .   | Ֆր.     | 26  |  |
| Վեցամսեայ . . . . . | »       | 14  |  |

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՐ  
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒՄ  
ՈՒՆԻ ԵՂՐՈՒԹԻՒՆ

# ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ  
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԱՆԻ, ՀԵՂԵՍԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ  
ՏՃՈՐԵԱԼՈՒԹՅԱՆ Յ. ԱՆՓԻՄԻ

## ՄԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Պարհուրի կերպով տգեղ, այլ-  
լանդակորէն հրէշային, յուսահատե-  
ցուցիչ, բոլոր լրագրութեան չըջան  
մըն է որու պահանջներն կ'ըլլան կոր,  
այս վերջի ճիշդ վեց տարիներուն մէջ:  
Եթէ երբեք մեծ դիւանագետի մը  
ըսածին պէս, «Ամեն ազգ իր լրագրի-  
նէն դատելու է», արդեօք ինչ ար-  
խուր գաղափար մը կազմած են մեր  
վրայ, ամեն այն օտարականները ո-  
րոնք հայ թերթի մը պարունակու-  
թեանը հետաքրքրուած են, այն օ-  
րէն ի վեր, որ մեր մեծ վիշտերովը,  
մեր անսպառ բողոքներովը, եթէ ոչ  
հասկանալի են, բայց գոնէ զթու-  
թեան արժանի ազգ մը համարուե-  
ցանք քաղաքակրթեալ աշխարհին  
մէջ:  
Ներքին ցաւ մը, նոգկանքի զգա-  
ցումին խառնուած, կը ճանկատէ՝ ճըշ-  
մարիտ Հայուն սիրտը, երբ ստիպ-  
ուած կ'ըլլայ ձեռք առնել այն թեր-  
թերը՝ որ Եւրոպիոյ էն լուսաւորեալ  
կեդրոններէն մեզ կուգան, մեր էն  
լուսամբին երիտասարդութեան կողմէ  
խմբագրուած:  
Վառնայէն սկսեալ մինչև Ամերի-  
կա, երկայն գծի մը վրայ, մեր ազ-  
տոտ լաթերը կը փռեն կոր ի տես  
աշխարհի:  
Գրականէն սկսեալ մինչև կուսակ-  
ցականը, զաւեշտականէն մինչև գե-  
ղարուեստականը, կիսաշաբաթեայ  
թերթերէն սկսելով մինչև ամսական  
հանգէնները, առանց մոռնալու սան-  
ձառձակ պարբերականները, ամենքն  
ալ առանց խտրութեան — խօսքս այս  
վերջի հինգ, վեց տարիներուն մէջ  
լոյս արձանագործելով վրայ է — ազգի  
արժանապատուութիւնը նուազա-  
ցնող, մեր արդէն ազազուն բար-  
քերը աղոտող, մեր զգացումները  
պոռնկացնող հրատարակութիւններ  
են, որ միւթին մէջէն դուրս կուգան,  
բան մը յարգել չեն գիտեր, իրենք  
զիրենք չեն ճանչնար, երկպառակու-  
թիւն կը սփռեն հոս ու հոն, զիրար  
կը մոտենն, միութեան, եղբայրակ-  
ցութեան ոգին կ'սպաննեն մեր մէջ,  
և ինչ որ ամենէն շատ կը կատար-

ցընէ լրջամիտ ընթերցողը, կը յա-  
ւակնին, այդ ամեն ոճերներէն ետքը,  
իրաւունք ունենալ ազգասիրութեան  
լուսապսակը փակցնելու իրենց ճակ-  
տին:  
Առէք ձեռքներդ այն ամեն լրա-  
գիրները որ այսօր լոյս կը տեսնեն  
Բարեկի մէջ, օրինակի համար՝ Շատ  
քիչ բացառութեամբ, ամենուն մէջ  
կ'զգաս թէ, նախանձն է իրենց դրա-  
մագրութիւնը, ատելութիւնն է իրենց  
պաշարը, և «Ես»-ն է նշանաբանին:  
Անոնց ամեն մէկ սողին մէջ, զի-  
բար բղկտելու մոլեգին մարմնով մը,  
իրարու աչք հանելու տենչ մը, հա-  
ցին պատառ բերնէ բերան խելու  
ճիգեր, զիրար անպատուելու, հայ-  
հոյելու, պարսաւելու մրցում մը, ա-  
հա՛ իրենց բրած լրագրութիւնը, ո-  
րուն պէս չեմ կարծեր թէ ուրիշ ազ-  
գեր ունեցած ըլլան:  
Գող, վատ, սրիկայ, խաբեայ,  
ապուշ, սինթոր, souteneur, ես ինչ  
գիտեմ, goujats-ներու բառարանը ամ-  
բողջ. — ահա այն ամեն տիպա-  
ները որ ամէն օր, պէն փայլեան  
ապոնք իրարու երեսին կը նետեն,  
պաշտելի անտարբերութեամբ մը որ  
խելագարութեան շատ հեռի չէ:  
Խելզ, միւրթութեան ուղեղներ:  
Եւ սակայն այս երիտասարդ գող-  
ներու երամը, — ես չամ մոռնէմ գիտեմ-  
ինչ յոյսեր կուտար թուրքիոյ հա-  
յերու, որքան գգուանք, որքան  
հպարտութեամբ կը մտնեայինք ի-  
րենց և ինչ ահագին զմայլում մըն  
էր որ կը սփռէին շուրջերին:  
Երբեմն, հակառակ թրքական ա-  
պուշ գրաբնութեան երկաթեայ կը-  
ռուփիտակ կծկտուած ըլլալուն, մեր  
այս գրադէտները հրաշալիքներ ար-  
տադրած են, պղտիկ դուրս-գործոց-  
ներ ստորագրած են, որոնց հաւա-  
քածոն, հայ լրագրութեան ոսկեդա-  
րին album-ը պիտի մնայ:  
Եւ երբ աղէտներու հոգանքը, և  
կամ չզգացուած ազգասիրութեան մը  
պատրանքը, տարաւ քշեց զիրենք  
Բարեկի մայրերուն վրայ, միթէ ի-  
րաւունք չունէինք սպասելու, որ մեր  
այդ երիտասարդները՝ գորս Բարեկի  
գրական աշխարհը կերպով մը որ-  
դեգրեց՝ տալին մեզի լաւագոյնները  
իրենց յղացումներուն, բանի որ կ'ապ-

րէին ատանկ ազատ, ատանկ լուսա-  
ւորեալ կեդրոնի մը մէջ:  
Ինչ յուսալուսութիւն . . . Պոլ-  
սոյ այդ մեծ գրադէտները պղտիկ-  
ցան. պղտիկցան ամբողջ իրենց ա-  
նունը յիշել տալու ատիճան և փո-  
փանակ ալ աւելի զարգանալու, լա-  
ւագոյնը ընելու, — և անոր համար  
ոչինչ կը պակսէր իրենց — իջան  
տիղմին մէջ, ինքնաճանաչութիւնին  
կորուստն, փոխանակ գրականութիւն  
ընելու, չըլլիկ էջեր արտագրեցին,  
հայոյանքով, զրպարտութիւններով,  
վայրահաշութիւններով լեցուն:  
Ազատութիւն, ազատութիւն մեր  
զգապղտիկները քննէ պիտի դայ:  
Այս օր ես կը նախընտրեմ Պոլսոյ  
Արեւելքը, Մասիսը, Բիզանդիոնը,  
և միւսները քան այն ամեն հանգէս-  
ները որոնք թուական սունկերու պէս  
Բարեկի սալայատակներուն վրայ  
բուսնին:  
Ազատութիւն մեր մէջ թաքուն  
բոլոր աղտոտութիւնները դուրս թա-  
փել կուտայ կոր. Պոլսոյ ճնշող մթն-  
շուրտին մէջ մէկ անուններ էին  
ասոնք. ազատ Բարեկի մէջ, . . .  
սոսկ սպլապաններ. կը հասկնամ,  
կենսապայքարն ալ մատ ունի այս  
ամենուն մէջ, հացի պտտուող աւելի  
մեծ մեղքերու կը մղէ մեզի պէս  
տկար արարածները:  
Տոկալ գիտնալը մեծ մարդու գործ  
է, Բարեկի մեր խմբագիրները պղտիկ  
մարդեր չէին սակայն . . .  
Դժբաղդութիւնը հոն է որ, այն  
իտեալը՝ որուն ետեւէն կը վազեն  
այսօր թուրքիայէ դուրս գոնուող  
հայ երիտասարդները, նոյն իսկ եթէ  
իրականանայ ուրիշ բանի չափի  
ժողայէ, բայց եթէ մեր մեծ ճանչ-  
ցածները պղտիկցնելու:  
Օրինակ ձեզի Բարեկի խմբագիր-  
ները:  
Յ. Ա.

### ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Թերթիս Աղբաւանդիւրի գործա-  
կալութիւնը Տիար Լեւոն Նիզամեան  
ստանձնած ըլլալով, բաժանորդագ-  
րութեան և ծանուցման համար զի-  
մեկ իր վաճառատներն՝ Թէվֆիք  
փաշա փողոց:

## ԼՈՐՏ ՔՐՈՍԸՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵԳԻՊՏՈՒՄ ԵՒ ԵՂՐՈՒՄ

Օրնագրական ժողովը բազմաթիւ անգամ-  
ներ ուղարկութեան հրաւիրած է երկրին մէջ  
դատարարութեան պակասին վրայ՝ Պէտք  
չունիմ ըսելու թէ որքան հաճոյքով կը հաս-  
տատեմ այս ժողովին անդամներուն ցոյց  
տուած շահագրգռութիւնը այսպիսի կենսա-  
կան նիւթի մը մասին, և որքան սրտաւեց  
կը համակրիմ այն բոլոր ճիգերուն զոր ա-  
նոնք կամ ուրիշ անձեր չեն խնայեր դա-  
տարարութեան ներկայ դրութիւնը բարե-  
բելու կամ ուսումը ծաւալելու համար այս  
երկրին մէջ: Անոնք չափի ըլլար թերեւ  
եթէ կարգ մը միջոցներ թելագրէի հոս այն  
ուղղութեան մասին զոր կարելի էր տալ  
այդ ջանքերուն որպէսզի իրենց մեծագոյն  
արդիւնքները տային:  
Եգիպտոսի վարժարաններէն շատ անհա-  
րիտասարդութեան կարեւորագոյն մասը հե-  
տաւան է Կոնստանտնուպոլիսէն ծառայութեան  
մէջ բերելու: 1898 տարուայ Տեղեկագրի-  
մէջ, արդէն վերջածած եմ Եգիպտական  
Քաղաքային պաշտօնութեան բաղադրու-  
թիւնը: Անոր մէջ գիտեմ տուած եմ որ,  
այն ատեն, կառավարութեան այլազան քա-  
ղաքային պաշտօնատանց մէջ եղող պաշ-  
տօնեայ (employé)ներու թիւը 10,600էն  
պակաս չէր: (Մենոյն ժամանակ երուպացի  
Քաղաքային պաշտօնեաներուն թիւն էր 1270  
որոնց 450ը Բրիտանացի):  
Յայտնի է որ եթէ վարչութեանց պէտ-  
քերը միայն ի նկատի առնուին, ինչպէս  
հարկատուներուն հաւաքական շահերը, փա-  
փաքելի պիտի ըլլար լայն չափով մը նաւա-  
զեցնել ստորակարգ պաշտօնեաներուն թիւը  
և աւելցնել մնացեալ բարձր պաշտօնատար-  
ներուն ամսականները: Ոչ մէկ դիտաւորու-  
թիւն կայ այսպիսի արականական միջոց մը  
ձեռք առնելու, որովհետեւ բազմաթիւ ար-  
ժանիքի տէր անհատներու, և իրենց ըն-  
տանիքներուն, մեծ զբաղմունքներ պիտի պատ-  
ճառէր, ինչպէս և ժողովուրդին մէջ մեծ  
զժոհութիւն մը, որ թերեւ անհամեմատա-  
կան է արտադրելիք առաւելութեանց հետ:  
Հաստատուած սովորութեանց մէջ չափա-  
զանց յանկարծական փոփոխութիւն մը պի-  
տի ըլլար աս, ինչ որ անհրաժեշտ պիտի  
դարձնէր բնաբարումը որոշ իրաւունքներու  
որոնք արդար՝ բայց ոչ թերեւ բացարձա-  
կապէս օրինական տեսակետով մը, վաւե-  
րացեալ կրնան նկատուիլ: — Թէպէտ ոչ  
փափաքելի ոչ ալ անհրաժեշտ ըլլայ խիստ  
միջոցներ ձեռք առնել բնիկ պաշտօնեանե-  
րուն թիւը նուազեցնելու համար, սա ճըշ-  
մարիտ է թէ երկրին արագ յառաջդիմութեան







նաև շատ մը սեղանաւորական հաստատութիւններ գոց փակուած են :

— Եզրկապական երկաթուղիներու վարչութիւնը Անգլիայէն և Ամերիկայէն նոր բերել տուած վայրաշարժները փորձի են թարկեց և արդիւնքը խիստ զոհացուցիչ գտաւ :

« Միւր » արարական թերթը կ'ըսէ թէ անգլիականները խիստ մեծ առաւելութիւններ ցոյց տուած են ամերիկեաններուն վրայ :

— Նոյն վարչութիւնը քննութիւն մը բացած է գտնելու համար Հնդկականիւր կարեւոր գողութեան մը սր վերջերս երևան ելած է :

Վալիոններու մէջ զրուելիք ելեքտրական լոյսին յատուկ յախճապական լուսարդիւններէն մեծ քանակութեամբ յարեալ ելած են կեղծական միջոցներ :

— Ժանտախտի երկու նոր դէպքեր երեւան եկած են երէկ, մին ի Միթ-Ղամբ և միւսը ի Պէնհա :

— Եւրոպական նախարարութիւնը շրջաբերական մը հանած է որուն պարունակութիւնը կառավարական պաշտօնեաներու հաճոյք պատճառներու բնոյթը չունի բնաւ : Այսուհետեւ տեղափոխութեան ծախք չպիտի սրուի այն ամեն պաշտօնեաներուն սրունք 20 ոսկիէն վեր ամսական ունին և իրենց անկարող վիճակը չեն կրնար ապացուցանել ամեն անգամ որ կառավարութիւնը ունի տեղ մը կը զրկէ զիրենց : Իսկ անոնք որ 20 ոսկիէն վար թոշակ մը ունին, տեղափոխութեան միջոցին իրենց տնօրէնին պէտք է դիմեն որ ուրիշ ստորնադաս պաշտօնեայի մը քննութիւնը մտնելու պիտի տայ կանխորոշ սահմանի մը մէջ, հարկ եղած ծախքերը : Իսկայի վաշայի փառաւոր օրերէն մնացած ոսկեպարէն վերջին առատածեւ նութիւններն են որ կամաց կամաց կ'անհետանան :

Խեղճ պաշտօնեաներ :

## ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ԵՐԵՎԱՆԻ ՀԵՌԱԳՐԵՐ

Ռեյն 21 Սեպտ. — Չարը, Չարուհին և Պ. Լուպէ ներկայ գտնուեցան բանակին 3րդ զօրքառման ռազմափորձերուն : Անոնք անապատ տեսարան մըն էր այս, որուն յաջորդող ճաշի միջոցին Չարը և Նախագահը որ և իցէ ծամանակէ աւելի պերճապատեմութեամբ ծառայեցին իրենց բարե-

Ու այդ պայծառափայլ օդը տեւած էր, ուղեկցած էր իրեն մինչև Երեւանի իր արեւուն և աստղերուն արքայաշուք հանդիսութեամբը :

Ոյժը վրան եկած էր, քաջութիւնն ալ և երբ Ազեքսանդրիա հասաւ, միտքը շատ հանգարտ էր, հոգին՝ յուսալօծար :

Չէր ուզած կանգ առնել այդ քաղաքը, առաւօտուն նաւէն ելած, կէս օրին Գահի-րէ էր անապարկով մտնելու իր նոր կեանքին մէջ, և իր վիշտերուն ու պարտականութիւններուն մէջտեղ կանգնելու կատարուած իրողութեան անանցանելի պատճառը : Կատարելապէս վստահ ինքն իր վրայ ու մտքին բնաւ չանցնելով խորշիլ այն կացութիւնէն զոր բնարած էր, որչափ ալ դժբերակ երևար իրեն :

Մակայն աչքին երեցած նորանոր բաներուն տեսիլը քանի մը ժամանակ տեղի ունեցող իր խորհրդածութիւններէն :

կամութեան և նիզակակցութեան վրայ : Պ. Լուպէ ըսաւ թէ այդ բարեկամութիւնը և նիզակակցութիւնը՝ հզօր կերպով նպաստեցին Եւրոպական դիմադրող հասարակարգի զարգացման և թէ իրենց նիզակակցութիւնը այնքան խոհեմ է որքան անվիճելի : Նրապատակն է իրենց բուն շահերը համաձայնեցնել ընդհանուր շահերուն և ընդունած է կանխաւ այն ամեն կարգադրութիւնները զորս մարդկութիւնը և արգարութիւնը իրեն կը ներշնչեն : Չարը պատասխանեց թէ Ռուսիա պիտի շարունակէ աշակցել այն ամեն բաներու մէջ որոնք Պրանսան կը շահագրգռեն : Պրանսայի և Ռուսիոյ միջև խաղաղասիր ռզմով և մտերմօրէն հաստատուած միութիւնը ընդհանուր մարդկութեան խաղաղութիւնը կ'ապահովէ : Ահադին բազմութիւն մը մտնելու կայքիցէնով ռզմունք Չարը, Չարուհին և բանակը :

Նոյն օրի, 21 Սեպտ. — Իրազելի ազգային քաղաքական կուսակցութիւնը համաձայնեց Պ. Բուզիլի մտնելով յարգանք մը կը տածէ Անգլիոյ հանդէպ : Թրանսկապի պատերազմի մէջ Միացեալ-Նահանգներու բռնած իշխող ընթացքը պիտի շարունակէ և հաւանութիւնն էր պիտի տայ միջովկական ջրանցքի մասին բացուած բանակցութիւններուն : Իր Անգլիոյ դէմ բռնելիք ընթացքը չայնքան անկեղծ, այնքան վեհանքն և այնքան ուղիղ պիտի ըլլայ որքան էր Պ. Մաք-Բիլլիսը :

Լա Հէ, 21 Սեպտ. — Պ. Վան Լինտըն, արտաքին գործոց նախարարը և նախագահ՝ իրաւարար մնալուն առնիւն, Պօէր պատգամաւորներուն ծանոցութիւնը ինդիքը՝ յառաջիկայ նիստի օրակարգին մէջ պիտի դնէ : Նոյն պատուիրակները տեսակցութիւն մը ունեցան, երէկ, Հոլանտայի Նախարարապետին հետ :

Բիթերմարիցպուրկ, 21 Սեպտ. — Պօէրները յաղթական արշաւանքներ կ'ընեն վերին Թուրքիոյ վրայ ուր անգլիական զօրքերը երեք հոգի կորուսին :

Լոնտոն, 21 Սեպտ. — Պրիսկէլ Մորնինկ Բուքի կ'եմացնեն թէ Պօէրները յաւարարած են որ Պօթա՝ 150 անգլիացի բանտարկեալներ իրեն պատանդ պիտի պահէ Լօրտ Գիլքէրի յայտարարութեան մէջ ցոյց տրուած սպանախնդրեան դէմ ինքզինքը երաշխաւորելու համար :

Բարիզ, 22 Սեպտ. — Չարը և Չարուհին զիրենց շրջապատողները զարգուբանքով ռզմունքէն ետքը, մեկնեցան Գիլի կառավարմանը : Երկուքն ալ թէ նախագահին թէ նախարարներուն, և թէ ասոնց տիկիններուն :

Չինքը աստուղ կառքը, անցնելէ յետոյ քանի մը Եւրոպական փողոցներէ, արոնց գեղեցկութիւնը ժերմէն զարմացուց, մտած էր քաղաքին զուրքը, անցնելով մեծամեծ ծառափողոցներէ քաղաքանքներով եղբարձիր, որոնց մեծաքանակ կը վարագուրէին ընդարձակ պարտէշները :

Պոլսական աքաբիներ իրենց տերեւներով թաւ կամար մը շէջը յօրինէին, նոսմաստներ զարբերէին գիւղի մէջ, ուր միջօրէի արեւը զոտարաւ կը թափանցէր :

Ոսկեգոծ վառարկութիւններ լիւնէն, կանաչներուն պատերէն վեր, յայտնի կ'էր մը կը բարձրանար, անուշաբոյր շունչով սը օդը կը լցնէր : Մագլիկ վարդեր կարծես խոյս տալ կ'ուզէին իրենց բանտէն, արձակ համարձակ իջնելով վանդակէններն ի վար՝ տուններուն ճակատները ծաղկափթիթ ու քաղճառ հոտ արարէնքներով ծածկելով :

Ներսի ձեռքը բանիցս սեղմեցին : Չարը խօսք տուաւ ի մօտոյ զալ և մայրաքաղաքը այցելել : Մահմանապուլը անցնելէն ետքը Նորին Վահափառութիւնը Նախագահին հետ ազգերէ թէ սրտազին կերպով շնորհակալ է այն կաթագին ընդունելութեան համար զոր գտաւ Քրանտական ազգին կողմէ որ այնքան սիրուած և յարգուած է ի Ռուսիա : Պրանտական մամուլը կը յայտարարէ թէ այն տեսակցութիւնը ահագին կերպով ամրապնդեց Պրանտայի կացութիւնը ի Ռուսիա :

(ՌԻԻԹԷՐ)

Բարիզ, 22 Սեպտ. — Հանրապետութեան Նախագահը՝ Պ. Լուպէ պատերազմական և ծովային գործոց նախարարներուն նամակաւ խնդրեց որ իր գոհունակութիւնը յայտնեն ցամաքային և ծովային կրկին բանակներուն, այն յատկութիւններուն զորս ասոնք ցոյց տուին վերջին ռազմափորձերու մէջ որոնց լրումն Ռեմիսի և Տունքերի զօրահանդէսները :

Կ. Պոլիս, 22 Սեպտ. — Մեծ Եպարքոսին թիմակար շատ ծանրացած է :

(ՀԱՎԱՍ)

### ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

Լոնտոն, 23 Սեպտ. — «Թայմ»-ը բարեկը տեղեկանայ թէ Չարին, Պ. Լուպէն և Պ. Վալտէ-Ռուսօն միջև բանակցութեանց զլուար նիւթերն եղած են Արեւելի և Մայրաքաղաք Արեւելի խորհրդերը, Պրանտայի և Թուրքիոյ յարաբերութեանց ձգտումը և Հայկական գործերը :

Ռուսիա իր ամբողջ ոյժով պիտի օգնէ Պրանտայի՝ Մայրաքաղաք Արեւելի մէջ ձեռնարկութեանց յաջողութեան :

Սըր Ալֆրէտ Միլնը որոշած է Եօհաննապուրիք ընել նոր քաղթականութեան պաշտօնական կեդրոնատեղին :

(ՌԻԻԹԷՐ)

Բարիզ, 24 Սեպտ. — «Կազէթ Եր-բուր» կը հաւաստէ թէ Թուրքիա կը վախճնայ սը Պրանտա՝ Թունուզի հետ զաջողութեան վաւերացումը չի պահանջէ իրմէ :

(ՀԱՎԱՍ)

### ՉԻ ՔԱՇԻՈՂ ՇԻՐՈՒՄԸ

(Պրանտայի որ կրնայ իրական ըլլալ)  
Գրիգորի կրկեան, իր կեանքն և հինգ յաւակներուն հետ, չքուստութեան մէջ ինկած է Հայաստանի մէկ մոլոցուն անկիւնը :  
Գրիգորին հօրաբարձը թողը Կարապետ էֆէնտին, Գահիլի մէջ հայտնաւ հաստու մըն է :

Գրիգորին միտքը կուգայ այս պարագան և օր մը, հեյլալէն ուսին վրայ և ծրար մը պատեմէ ինչին տակ Իսկնտէրուէի ճամբով կուգայ Գահիլի :

— Բարե Կարապետ էֆէնտին, խուրպան ըլլիմ :

— Բարի եկար, հազար բարի : Հայրենիքը ինչ կ'ոյ չկայ : Ըսէ նայինք :

— Պատք Աստուծոյ, տուն տեղ ամենքն ալ լաւ են, ձեռքդ իշ պիտի ընեն :

— Նասըլ եղաւ քե հոտեղունքը եկար :

— Ի՞նչ, էֆէնտին Երուսաղէմ գնացի ետ դառնալու, վարձը երկու օր վարք տի կենար, հեյլէ մէջ մը սա մեր Կարապետ էֆէնտին տեսնաւ բօի :

— Աղէկ ըրիւր, բարի եկար :

\* \* \*

Գրիգոր Կրկեան, երկու օրը կ'անցունէ, օրերը կ'ըլլան չորս, հիւզ, տասը : Կարապետ էֆէնտին սիրտը թունդ կ'ըլլէ :

— Իսկ երկու օր ըսեր էր, դիտել կուտայ կեկանք, երկու շաբաթ կ'ըլլայ կոր :

— Ե՛յ ինչ ըսեմ, բա մարդդ է, իմ բաւաճէս չէ՞ ես :

— Հասկցար, կե՛ն մի պաշտեմ, սա երկայն կ'ընէ կոր :

Տասը օրէն օրեր ևս կ'անցնին, Գրիգոր ամեն տուտ Մէլիշի կողմը կ'երթայ և իրկուր պարագային թեամբ կուգայ տուն : Երկու օրը կ'ըլլայ ամիս մը, մարդը բնաւ հոն տեղուանք չէ :

— Աս նասըլ պիտի ընենք, վայր քեպի-եկիդ հեյլէ մէջ, սըմար մէկ ճորձ :

— Կայնէ վաղը ես պիտի մը կը հասկցնեմ :

Միւս օրը :

— Գրիգոր աղբար, տն չէ ամա, ընտաւ նիւթդ լուր կ'անեն կոր :

— Չէ, խուրպան, տուած չունիմ :

— Ե՛յ, ատ կ'ըլլիմ, առաջալ կ'ընիլ, չո՛ճուներդ ինչ ֆէսթէն կ'ընեն կոր, չես հարցունք, չես փնտռեր, երկու օր ըսիր, զաւալլիքն ուր աշքերնի դուստը մնացած է հեյլիք :

— Ես ալ ատ կը մտնեմ կոր :

— Տեսար մի ետ, գաւի տէր մարդը ասանկ ըլլալու է :

— Աս գիշեր մտնաւ տէ, ատոր չարէ մը կը տեսնենք :

Իրկուր եղելութիւնը կը պատմէ Երկունը :

— Տեսար բնաւ պիտի մը հասկցուցի :

— Աճեիմ, Մաքրի :

Միւս օրը, տառու կանուխ :

— Բարի Լոյս Մարիկ հանրմ, արեւու խուրպան ըլլիմ, դուն խեղաւ պայիք, Աստուած որտեղ կ'օրէ տայ : Քուրու հանրմ, բապաղա մը թուղթ, խալիմ մը, փուլ մը անիմ :

— Հա՛ ետ, ինչ խուրապ կուգես քե, որո՞ւ պիտի գրես :

— Կնկանս պիտի գրեմ ըրի, չօրեմ չօճուիք թօփալիք ընէ տէ, տունէ պերէ հոտ :

Մարիկ հանրմին տեղը գուր եղիք հիւսայ . . .  
ՌԱՏԱՄԱՏ

# Գ. Ե. Կ. ՄԵԼԻՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԻԹՆԵՐՈՒ

ԳԱԶԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎՅՈՒԹԵՆ — ԳԼԽԱԽՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԿԻՆ ԶԱԲԹԻԹԻ ՇԵՆԲ



# Մ Ո Ւ Չ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ  
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՑՈՒՄ 1843 թ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՅԻՍԵՔ

Ապահովագրական ամեն կարելի դրուբիւններ կը զո ծաղէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագրութիւն, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՉՈՒԱԼ ԼԱՅՅԻ սակագիրն և ապահովագրութեան զանազան դրուբիւնները չունենաւորած մի ապահովագրութիւն. — Առատութեան պայմանները  
Տեղեկութեանց համար գիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԳԻՐԶԻՍ և Ժ. ՎԱԼԻՅԵՐ, Ընդհ. ներկայացուցիչը:  
Աղբքանդրիւն Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալտար: Գ. ԵԿԱՒԻՅ Դէր-Գործակալ ի Գահիրէ

## ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԴՐԱՄԱԳԻՐԻԻ 200,000,000 ՅԻՍԵՔ  
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ 8 ԵԳԻՊՏՈՍ  
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ-ԳԱՂԻԲ ԲՈՒ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:  
Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:  
Ճրանայի և օտար երկիրներու վրայ կաւտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:  
Կը դանձէ եգիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:  
Աւանդ ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուրհակներ կուտայ:

## ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

### ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵԻ  
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԳԻՐ  
ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ  
ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բօս-Սայիտ, Եաֆա, Երուսաղէմ, Պալեստինա, Պոլս:  
ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւրոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղբքանդրիւն ամեն շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:  
ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաւները Բիւրսայէն:

Բէա հանդիպելուն, Աթէնք այցելել:  
ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ.  
ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բօս-Սայիտ, Եաֆա, Երուսաղէմ, Պալեստինա, Պոլս:  
ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւրոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղբքանդրիւն ամեն շաբաթ օր, առաւօտեան ժամը 6ին:  
Ճամբորդները անգամ մը՝ երթեւել կարմիր

Մովու հետեւեալ նաւահանգիստներու միջև.  
ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ  
Ճամբորդութեանց և ապրանք համար գիմել ընկերութեան Աղբքանդրիւն, Բօս-Սայիտ, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուրի ամեն մասնաճիւղերուն:  
1-1902

## ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

—X—  
ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑԻ ԵՒ ԳՈՂԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ  
ԴԱՀԻՐԷ, Մուսի փողոց,  
Ս. և Ս. Սիսնաիի վաճառատան դէմը  
Ապրանք զանազանութիւն  
Երաշխաւորութիւն  
Աժանութիւն  
Ճօխ հաւաքածոյ Ամերիկեան և Յրանսական  
Շօնօկրաֆներու  
Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի:  
ԱՅՑԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՂ ՊԻՏԻ ՄՆԱՔ

## ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խտիվական Հրամանագրով  
23 Յունվար 1898

Դրամագրութիւն Միջլ. ոսկի 1,500,000  
Պահեստի դրամ " " 193,000


Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաճիւղեր.  
Աղբքանդրիւն, Մանսուրա, խարթում:  
Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

## Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՄԷՋ

Կը ապուին ամեն լեզուէ հարսանեկան հրաւիրագրեր, Տեղեկագրեր, նամակագրութիւն, Պրքեր, Տոմսեր, Հաշիւեցոյցներ, Մահազգեր Յայտարարութիւններ, ևայլն, ևայլն:  
ԱժԱՆ ԳՆԵՐՈՎ



ՅԱՆՋՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՓՈԹՈՎ ԿԸ ԿԱՏԱՐՈՒՆ  
50 % ԿԱՆԻՅ ՎՃԱՐԵԼՈՎ

## ՍԷՏԷՑՃԵԱՆ

Հիմնաւ ի Կ. ՊՕԼԻՍ 1882 թ  
ՓՈԹԱՐԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ 1898 թ

ԱԹԱՊԱՒԷԼ - ԽԱՏՐԱ — ՊԱՋԱՐ-ՄՈՒՐՈՒՐ

Այս ծանօթ շուանկարչատան մէջ շատ խնամեալ և վերջին դրութեամբ կը պատրաստուին ամեն ժեծութեամբ և ամեն տեսակ լուսանկարներ. կողովներ և անկաշակ սխալանքներ:

Դուրսը անուեկիք լուսանկարներու համար դիւրամաշիւրի պայմաններ:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԱԳՐՈՒԹԻՒՆ  
ԱՐՈՒԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՇԱԿ  
ԳԻՆԵՐՈՒ ՉԱՓԱՌՈՒԹԻՒՆ

ԲԻՆԾԸԼ ԵՒ ՍԻՍՕՆՍ  
Հաստատեալ յամին 1860

ՀԱՅԱԳՈՐԾՔ-ՀԱՅԹԱՅԹԻՉՔ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ

Այս նշանաւոր փուռին մէջ կը պատրաստուին ամեն տեսակ հացեր, պիսքիւներ, եւ քէյքեր:

Այս փուռին մասնաւոր կառքեր կը շրջագային Գահիրէի ամեն թաղերու մէջ, ինչպէս նաև Զէյթուն և ի Հէյվան:

Թէվֆիգիյէ, Պուլաթի ճամբայ. ԳԱՀԻՐԷ  
Թէլէֆօն թիւ 504.

ՎԱՃԱՌԱՑՈՒՆ Ս ԵՐԷՅԷՆ

ԱՐՄԱՔ  
ՄԱՅՅԱԼ  
ԲԱՐԻՋ  
1900

ՄԱՐԱՑ  
ԿԻՆԵՐՈՒ  
ԵՒ  
ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ  
ՀԱՆԴԵՐՁՆԵՐ  
ԸՍՏ ՎԵՐՋԻ ՆՈՐԱՅԵՒՈՒԹԵԱՆ  
ՉԱՓԱՌՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ  
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ — ԳԱՀԻՐԷ